# ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ ՏՐՈՑ...
# ՄԻՆՉԵՎ ՎԵՐ...
## ԱՀԱ ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԻ Ս...

### ԱՆՈՂՈՔ ԴԱՏԱՍՏԱՆ ՄԵՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍՏՈՐ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Խորհրդային Միության գիտական աշխատողները վայրույթի և մեծագույն ցասումի զգացմունքով իմացան անարգ տրոցկիստների՝ Հայրենիքի այդ ստոր դավաճանների հրեշավոր հանցագործությունները, դավաճաններ, վորոնց հանցավոր գործունեությունն այժմ յերևան է բերում խորհրդային դատարանը:

Վաճառվելով ֆաշիստներին, համաձայնության գալով մի քանի ագրեսիվ իմպերիալիստական պետությունների դիվանագետների ու գլխավոր շտաբների հետ, մարդկային ճիվաղների, ֆաշիստ մարդակերների ծառաների այդ անարգ վոհմակը, վորը ղեկավարվում եր Գեստապոյի գործակալ բանդիտ Տրոցկու կողմից, մեր սոցիալիստական հայրենիքը և նրա հարստությունները վաճառում եր մարդկային առաջադիմության ամենավոխերիմ թշնամիներին:

Ստոր դավաճանները մահափորձ եյին կազմակերպել ժամանակակից դարաշրջանի լավագույն մարդկանց, աշխարհի առաջին սոցիալիստական պետության ղեկավարների դեմ, հրեշավոր վնասարար ակտեր եյին կազմակերպել սոցիալիստական գործարաններում, հանքերում ու յերկաթուղային տրանսպորտում, սպանում եյին մեր հերոսներին, ստախանովականներին, մեր պանծալի, քաջարի կարմիր բանակայիններին, կողոպտում եյին խորհրդային պետությունը՝ տրոցկիստների վոհմակը պահպանելու և նրա հանցավոր աշխատանքը ֆինանսավորելու համար:

Ձգտելով թուլացնել սոցիալիզմի մեծ յերկրի ռազմական ու տնտեսական հզորությունը, կապիտալիզմի ռեստավրատորների այդ անարգ վոհմակը վորձում եր ֆաշիստների համար հեշտացնել ԽՍՀՄ-ի տերիտորիան հափշտակելու, կապիտալիզմը վերականգնելու նենգ դիտավորությունների իրականացումը: Նրանք յերազում եյին մեր յերկրում իշխանությունը կապիտալիստների ձեռքը վերադարձնել, կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները լուծարքի յենթարկել, խորհրդային ժողովրդին ստրկացնել, գործազրկությունը, աղքատությունն ու սովը վերադարձնել, նրանք ցանկանում եյին խորհրդային ժողովրդին զրկել ստալինյան Սահմանադրության մեջ գրանցված մեծ նվաճումներից:

Մենք մեր խորհրդային դատարանից պահանջում ենք անողոք դատաստան տեսնել լկտի դավաճանների նկատմամբ: Մենք պահանջում ենք բնաջինջ անել անարգ ճիվաղներին:

Մենք պահանջում ենք նաև մինչև վերջը քննության առնել աջ թափթփուկների՝ Բուխարինի, Ռիկովի, Ուգլանովի ունեցած մասնակցությունը տրոցկիստների հանցավոր գործունեության մեջ և ամենադաժան պատասխանատվության յենթարկել նրանց:

Գիտական աշխատողներն իրենց բոլոր գիտելիքներն ու ուժերը կնվիրեն մեր մեծ սոցիալիստական Հայրենիքի հետագա ել ավելի արագ աճման ու ծաղկման գործին, Կարմիր Բանակի՝ խորհրդային սահմանների հավատարիմ պահապանի հզորության հետագա ամրացման գործին:

Գիտական աշխատողներն ամբողջ խորհրդային ժողովրդի հետ միասին ե՛լ ավելի սերտորեն կհամախմբվեն Կոմունիստական կուսակցության, նրա Կենտրոնական Կոմիտեյի և սիրելի առաջնորդ ու բարեկամ ընկեր Ստալինի շուրջը:

Գիտությունների Ակադեմիայի նախագահ՝ ակադեմիկոս՝
Վ. ԿՈՄԱՐՈՎ

Վարնիտսո-ի Կենտրոնական բյուրոյի նախագահ՝ ակադեմիկոս
Ա. ԲԱԽ

Բարձրագույն դպրոցի ու գիտական հաստատությունների աշխատողների Միության կենտկոմի նախագահ՝ պրոֆեսոր
Պ. ՎԱԼԵՍԿԱԼԻՆ

Գիտական աշխատողների սեկցիայի կենտրոնական խորհրդի նախագահ՝ ակադեմիկոս
Բ. ԿԵԼԼԵՐ

Ակադեմիկոսներ՝
Ա. ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ
Ն. ՎԱՎԻԼՈՎ
Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ
Ի. ԳՈՒԲԿԻՆ
Գ. ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ
Ա. ՏԵՐՊԻԳՈՐԵՎ

Գիտության վաստակավոր գործիչներ՝
Պրոֆեսոր Ն. ՈԲՐԱԶՑՈՎ
Ճարտարապետ-պրոֆեսոր
ՑԵ. ՊԱՎԼՈՎՍԿԻ
Պրոֆեսոր Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ

Պրոֆեսորներ՝
Վ. ՎԵԳՆԵՐ
Վ. ՎԻԱՌՈՑԿԻ
Պ. ԶԴՐԻԴՈՎՍԿԻ
Բ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Ի. ՌԱԶԵՆԿՈՎ
Գ. ՖԵՈԴՈՐՈՎ

## ՎՈՉՆՉԱՑՆԵԼ ՍՏՈՐ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻՆ

Հաշմկոոպի արտելների բանվոր-ծառայողների միացյալ թուցիկ միտինգը պրոլետարական դատարանից պահանջում է վոչնչացնել ֆաշիզմի գործակալ իժերին, Հայրենիքի դավաճաններին, այնպես, ինչպես ԽՍՀՄ-ի աշխատավորների կամքով վոչնչացվեց տրոցկիստական-զինովյեվական տեռորիստական կենտրոնը:

Միտինգը միաժամանակ պահանջում է խստագույն դատաստան տեսնել նաև Հայաստանում հայտնաբերված հակահեղափոխական-տրոցկիստական-դաշնակցական-նացիոնալիստական վիժվածքների նկատմամբ, վորոնք միացել եյին իրենց սև գործը կատարելու համար:

— Ի պատասխան սոցիալիզմի այդ անկարգ թշնամիների,— ասված է այնուհետև բանաձևում,— մենք ել ավելի սերտորեն համախմբված կոմունիստական կուսակցության շուրջը, մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը, ավելի մեծ խանդավառությամբ կկատարենք մեր արտադրական պլանները, այդպիսով ավելի ուժեղացնելով մեր յերկրի պաշտպանունակությունը, բարգավաճումը:

***

Հակահեղափոխական տրոցկիստական կենտրոնի դատավարության առթիվ գումարված թուցիկ միտինգում ընդունած բանաձևում Կոտայքի շրջանի հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվի անդամները հայտարարում են,— Մենք, խորհրդային յերկրի աշխատավորներս, թույլ չենք տա, վոր թշնամու սև ձեռքը բարձրանա մեր ազատ, յերջանիկ յերկրի վրա, մեր կենսատուի, մեր հայր, մեր ուսուցիչ, սիրելի ընկեր Ստալինի վրա:

Թշնամու ձեռքը մենք կկտրենք հենց ոդում: